Յ.Լեփսիուսի անվան թիվ 88 հիմնական դպրոց

Դասղեկի աշխատանքային տարեկան ծրագիր

2022-2023 ուսումնական տարի

Դասղեկ- Մ.Մարտիկյան

Դասարան - 9-րդ

1.Դասարանի ընդհանուր բնութագիրը

Դասարանը բաղկացած է 26 հոգուց: Աշակերտներից մեկը ունի գերազանց առաջադիմություն: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են: Անհատական աշխատանք է կատարվում ցածր առաջադիմություն ցուցաբերած աշակերտների հետ: Աշակերտները նախաձեռնող են, կազմակերպված և կարգապահ: Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ: Ակտիվ մասնակցում են համադպրոցական միջոցառումներին:

2.Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում:

Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Անցկացնել ծնողական ժողովներ ,որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Աշխատել ցածր առաջադիմություն ցուցաբերած աշակերտների հետ: Համագործակցել դասավանդող ուսուցիչների հետ:

3.Հայեցի դաստիարակություն

1.Հոգևոր դաստիարակություն: Կարևորել կրոնը որպես համախմբող և հայապահպան գործոն:
2.Գեղագիտական դաստիարակություն: Աշակերտների մոտ զարգացնել գեղեցիկը գնահատելու և արժևորելու կարողություն:
3.Ֆիզիկական դաստիարակություն: Գիտակցել առողջ ապրելակերպի դերը յուրաքանչյուրի կյանքում:
4.Աշխատանքային դաստիարակություն: Բացատրել աշխատանքի կարևորությունը յուրաքանչյուրի ֆիզիկական և մտավոր կարողությունների ձևավորման գործում:
5.Բնապահպանական դաստիարակություն: Հնարավորինս լավ ճանաչել բնությունը՝այն պաշտպանելու և պահպանելու համար: